

է : Ա'երենայ թէ աս ծեփը բաց օդու
մէջ ալ կենայ նէ՝ չայլայլիր, և չորնա-
լէն ետքը սաստիկ կը կարծրանայ .
թէպէտ և կամաց կամաց կը պնդանայ .
խիստ քիչ կ'ընդարձակի ու կը քա-
շուի . փայտի, քարի, երկթթի և ու-
րիշ գամի վրայ սաստիկ կը կըպի : Ա
նիւթը շատ կը գործածուի պատ ծե-
փելու, պատի վրայ զարդեր շինելու,
սուտ մարմարիոն ձեացընելու, ան-
ձրեի ջրորդան ' շինելու, այլեայլ ա-
նօթներ շինելու ևն : Երբոր աւազն
ու ասիկայ հաւասար չափով խառ-
նես, շատ գիմացկուն ու ամէն բանի
պիտանի ծեփ մը կը շինուի, որ Անգ-
ղիացիք շատ բանի ալ կը գործածեն :

Կօշէ ժայլեցնելու սեաներէ :

ԱԱՆԴԻ մէջ ծեծէ երկու մաս վա-
նաշաքար՝ ու չորս մաս այրած փղոսկը¹,
յետոյ ասոնք մետաքսէ մաղէ մը ան-
ցու . սանդին մէջ ալ ածուխէ կրակ
լեցու որ տաքնայ . ետքը կրակը մէ-
ջէն թափէ, ու մէջը կէս մաս Ճեր-
մակ քացախ լեցու, որուն մէջ նոյն
չափ աղբիւրի ջուր ու կէս մաս շաքարի
տորտ խառնած պիտի ըլլաս : Ասոնք
ամէնը մէկէն խառնելէն ետքը կը լեցը
նես սանդին մէջ, ու մէկէն վրան կ'ա-
ւելցընես ան մաղած շաքարը ու այ-
րած փղոսկը : Ետքը նորէն կը ծե-
ծես՝ որպէս զի զանգուածը աւելի
բարակ ու թանձը ըլլայ : Երբոր սան-
դը կը պաղի՝ կը հանես պղտիկ ապակէ
կամ հողէ բղուկներու մէջ կը լեցը-
նես, ուր ինքնիրեն կը չորնայ . թէ որ
կ'ուզես՝ նոյն ատենն ալ կրնաս գործ-
ածել:

Դործածելու ատենդ կ'առնես մէկ
կարծր փետուր մը, և ջրի մէջ թրջե-
լէն ետքը՝ կը խոթես բղուկին մէջ, ու-
ժով կը գարծընես . և որչափ որ ասոր
վրայ կապած կ'ելլէ՝ այնչափը բաւական

է կօշիկ մը փայլեցընելու . ուստի կը
տարածես անիկայ կարծր խոզանակի՝
մը ծայրը, ու անով բոլոր կօշիկը կը
շփես . ետքը խոզանակին մէկալ ծայ-
րը կը գարծընես, անով ալ կը շփես,
ու կը փայլի . գէշ հոտ ալ չունենար,
կաշին ալ աւելի կ'ակուղ ու անթա-
փանց կ'ըլլայ :

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ

(Ալէն առաջ էկած սոսկալէ դիպուած ճը :

ՀԻՆ սովորութիւն է ամէն տեղ
կաղանդին և ուրիշ մեծ տօներուն
անուշեղէններով ու խմորեղէննե-
րով նոր տարին մէկմէկու շնորհաւո-
րել, ու բարեմաղթել իրարու որ ան
տարին ալ ողջ առողջ ու երջանկու-
թեամբ անցընեն : Ի՞այց մեղք որ ա-
մէնքն ալ աս բարեմաղթութեան
պտուղը չեն վայելեր, կամ ուրիշ
պատճառաւը, և կամ իրենց կամօքը,
երբոր թշուառութեան պատճառ ե-
զողգործքերը՝ երջանկութեան պատ-
ճառ կը սեպեն, ու չարաչար կը խա-
բուին : Վաճառստանի Ի՞այսոց քա-
ղաքին քովերը, որ Փեթրվարա-
տին քաղաքին մօտ է, երկու գեղացի
երիկ կնիկ՝ օր առաջ պատրաստութի
կը տեմնեն, կը մտնեն իրենց սովորա-
կան կառքն ու քաղաք կ'երթան որ
տօնին համար պաշար ձարեն : Ուրիշ
զանազան պաշարներէն զատ մէկ հար-
կաւոր պաշար մըն ալ աս կ'ըլլայ որ
մինդեղ ալ գնեն, վասն զի միներուն
ձեռքէն շատ գանգատ ունին եղեր :
Եւ որովհէտեւ հոն սովորութիւն է
եղեր մինդեղը բարկ օղիով բաղա-
դրել մէկ ապակիկ ամանի մը մէջ լե-
ցընել կուտան օղին ու հետը ան սաս-
տիկ թոյնը, կ'ելլէն կը մտնեն իրենց
կառքը, և ուշ ատեն դէպ'ի գեղը կը
դաւնան : Ճամբուն վրայ մութ ա-

1 Օլուգ :

2 Հակա :

3 Նեղէլ չերէ :

4 Ֆիւրի :

5 Գականու :

1 Ֆրլա :